

**«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ**

**25.04.2019թ.-ի Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի  
թիվ 17-4 որոշում**

1. Հիմք ընդունելով «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ 25/04/2019թ.-ի Խորհրդի նիստի թիվ 103-1.4 որոշումը և հաշվի առնելով Բանկի 2018 թվականի ֆինանսական արդյունքները՝ Բանկի 2018թ. գործունեության արդյունքում ձևավորված զուտ շահույթից Բանկի բաժնետերերին վճարել 2,700,000,000 (երկու միլիարդ յոթ հարյուր միլիոն) ՀՀ դրամ՝ որպես տարեկան շահութաբաժիններ (այն է՝ յուրաքանչյուր 1 բաժնետոմսի դիմաց՝ 1,080,000 (մեկ միլիոն ութսուն հազար) ՀՀ դրամ):
2. Տարեկան շահութաբաժինների վճարումները կատարել առավելագույնը մինչև 23/05/2019թ.-ն (երկու հազար տասնինը թվականի մայիսի քսաներեքը) ներառյալ, Ֆինանսական գծով Բանկի գլխավոր գործադիր տնօրենի տեղակալի հսկողությամբ, դրամական եղանակով, միանվագ կամ մաս-մաս փոխանցմամբ՝ պայմանով, որ դա չի հանգեցնի Բանկի և վերջինիս բաժնետերերի կողմից օրենսդրական և պայմանագրային պարտավորությունների խախտմանը:
3. Շահութաբաժինների վճարումն իրականացնել «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ (այն է՝ 22/03/2019թ.) Բանկի մասնակիցների ռեեստրում ընդգրկված բաժնետերերին՝ կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցությանը համամասնորեն: